



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Երևան, Կառավարական փուն 1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

(«Ատլաս-Էներգո» ՍՊ ընկերության 23.01.2017թ. վարչական բողոքը
բավարարելու մասին)

Ք. ԵՐԵՎԱՆ

«17» փետրվարի 2017թ.

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ ի դեմս ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ուսումնասիրելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 27.12.2016թ. թիվ 43/1 որոշումը բեկանելու և նոր վարչական ակտ կայացնելու պահանջի վերաբերյալ «Ատլաս-Էներգո» ՍՊ ընկերության 23.01.2017թ.-ի բողոքը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.

«Ատլաս-Էներգո» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ նաև Ընկերություն կամ Բողոք բերած անձ)՝ ի դեմս տնօրեն Տիգրան Մեծլումյանի, բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովին (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Գանգատարկման հանձնաժողով)՝ 27.12.2016թ. թիվ 43/1 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում) բեկանելու և նոր վարչական ակտ կայացնելու վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 23.01.2017թ.-ին:

Բողոք բերած անձը հայտնել է, որ 17.08.2016թ. թիվ 1010993 հանձնարարագրի համաձայն՝ Ընկերությունում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքում 31.10.2016թ. կազմվել է թիվ 1010993 ստուգման ակտը (այսուհետ նաև՝ Ակտ):

Ընկերությունը 30.11.2016թ. բողոք է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողովին՝ պահանջելով մասնակի չեղյալ համարել Ակտը՝ դրա 3-րդ կետով սահմանված ավելացված արժեքի հարկի վերաբերյալ Ընկերության խախտումները չարձանագրելու մասով:

Գանգատարկման հանձնաժողովի 27.12.2016թ. թիվ 43/1 որոշմամբ Ընկերության բողոքը մերժվել է:

Բողոք բերած անձը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի որոշումն ակնհայտ անհիմն է, պատճառաբանված չէ, կայացվել է ՀՀ օրենսդրության կոպիտ խախտումներով, Գանգատարկման հանձնաժողովը կիրառել է այն օրենքը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել գերակա նշանակություն ունեցող օրենքը, չի կատարել գործին առնչվող բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակցի օգտին առկա հանգամանքների բազմակողմանի, լրիվ և անաչառ քննարկում՝ սահմանամերձ գոտում գործող հարկատուին զրկելով առավել բարենպաստ պայմաններ ընձեռող «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքով վերապահված արտոնություններից օգտվելու հնարավորությունից: Ըստ Բողոք բերած անձի, նման վարչարարությունն ուղղակի խոչընդոտում է տնտեսավարողի բնականոն աշխատանքներին և հակասում է ՀՀ կառավարության քաղաքականությանը:

Մասնավորապես, ըստ Բողոք բերած անձի, Ակտի ավելացված արժեքի հարկին (այսուհետ՝ նաև ԱԱՀ) վերաբերող 3-րդ կետում ըստ էության ամրագրվել է, որ «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի ուժով Ընկերությունն ազատված է ավելացված արժեքի հարկից՝ հիմնավոր համարելով դրա համար օրենքով նշված պայմանի առկայությունը, այն է՝ ՀՀ

կառավարության կողմից հաստատված ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպությունները, որպիսին գնահատվել է նաև Բողոք բերած անձը, իրենց գրանցման վայրի հարկային մարմին չեն ներկայացրել սույն ենթակետով նախատեսված արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն:

Ընկերության կողմից Իջևանի տարածքային հարկային տեսչություն վերոհիշյալ հարկային արտոնությունից հրաժարվելու մասին դիմում չի ներկայացվել, որպիսի պարագայում վերջինս օրենքի ուժով համարվել է ԱԱՀ-ից ազատված, սակայն 2015 թվականի ընթացքում Ընկերության կողմից արտադրված և իրացված էլեկտրաէներգիայի համար «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը դուրս են գրվել հարկային հաշիվներ, որոնց մեջ օրենքով սահմանված կարգով արտացոլված ԱԱՀ-ի գումարները ներառվել են հարկային տեսչություն ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներում: Մասնավորապես, Ընկերության կողմից 2015 թվականի 1-ին, 2-րդ և 4-րդ եռամսյակների համար ներկայացված ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկներով սխալմամբ արձանագրվել է վճարման ենթակա ԱԱՀ-ի ընդհանուր գումար 12.244.186 ՀՀ դրամի չափով, որը գերավճարի հաշվին նվազել է և հարկման ենթակա ԱԱՀ-ի գումարը կազմել է 9.556.057 ՀՀ դրամ:

Բողոք բերած անձի պնդմամբ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 11.11.2010թ. թիվ 1504-Ն որոշմամբ սահմանված դուրս գրված հարկային հաշիվների չեղյալ ճանաչման վերաբերյալ դրույթները, որոնք զրկում են Ընկերությանը սխալմամբ ներկայացված հարկային հաշվարկները ճշգրտելու կամ դուրս գրված հարկային հաշիվները չեղյալ ճանաչելու հնարավորությունից, ստեղծում են անբարենպաստ պայմաններ և հակասություններ, որի արդյունքում հարկման նպատակով Ընկերության համար միանշանակ պետք է կիրառելի համարվեն «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի դրույթները, որոնք սահմանամերձ գոտում գործող Ընկերության համար ստեղծում են բարենպաստ պայմաններ: Արդյունքում, Բողոք բերած անձը պահանջում է կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ պարբերությունը, որի համաձայն. «Եթե Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության և հարկային

հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված դրույթները պարունակում են հակասություններ, երկիմաստություններ կամ տարընթերցումներ, ապա հարկման նպատակով այդ դրույթները մեկնաբանվում են, ինչպես նաև հարկային և (կամ) մաքսային մարմինների կողմից (տեղական հարկերի դեպքում՝ նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից) կիրառվում են հարկ վճարողի օգտին»:

Ըստ Բողոք բերած անձի՝ Գանգատարկման հանձնաժողովն իր որոշմամբ չի անդրադարձել այն հանգամանքին, որ վարչական մարմինը խախտել է «Հայաստանի Հանրապետությունում սուուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջները, քանի որ չի պաշտպանել տնտեսավարող սուբյեկտի գույքային իրավունքները, չի արձանագրել բացահայտված խախտումները, չի տվել դրանց նկարագրությունը, չի ապահովել գործին առնչվող բոլոր, այդ թվում վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները, չի ապահովել վարույթով փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և անաչառ քննարկումը:

Վերոգրյալի արդյունքում Բողոք բերած անձը խնդրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով և նույն օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ որպես վերադաս վարչական մարմին բավարարել Հանձնաժողովին ներկայացված բողոքը, բեկանել Գանգատարկման հանձնաժողովի կողմից կայացված 27.12.2016թ. թիվ 43/1 որոշումը և կայացնել նոր վարչական ակտ հետևյալ բովանդակությամբ՝ «Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2016թ. հոկտեմբերի 31-ի թիվ 1010993 սուուգման ակտի՝ «Ավելացված արժեքի հարկ» վերտառությամբ 3-րդ կետն ամբողջությամբ: Արտադրված և իրացված էլեկտրաէներգիայի, ապրանքի համար «Ատլաս-էներգո» ՍՊ ընկերության 2015թ. 1-ին, 2-րդ և 4-րդ եռամսյակների ԱԱՀ-ի գումարի նկատմամբ տույժեր և տուգանքներ չհաշվարկել, Ընկերությանը չձանրաբեռնել լրացուցիչ պարտավորություններով, պարտավորեցնել 9.556.057 ՀՀ դրամի ԱԱՀ-ն վճարել ՀՀ պետական բյուջե»:

2. Մասնակցի դիրքորոշումը.

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2017թ.-ի փետրվարի 17-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էր Բողոք բերած անձի տնօրեն Տիգրան Մեժումյանը և լիազորված անձ Արմեն Մկրտչյանը:

Վերջիններս լսումների ընթացքում հայտնեցին, որ պնդում են իրենց կողմից ներկայացված դիրքորոշումը, ընդունում են այն փաստական հանգամանքը, որ իրենց կողմից դուրս են գրվել հարկային հաշիվներ, որոնցով նախատեսված է ավելացված արժեքի հարկի կիրառում, սակայն որևէ կերպ չեն հրաժարվել և չեն հրաժարվում դրա արդյունքում առաջացած ԱԱՀ-ի հարկային պարտավորությունը կատարելուց:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ սույն դիմումի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

3.1. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 17.08.2016թ. թիվ 1010993 հանձնարարագրի հիման վրա 22.09.2016թ.-ից մինչև 20.10.2016թ.-ը «Ատլաս-Էներգո» ՍՊ ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում:

3.2. Ստուգման արդյունքում 31.10.2016թ. կազմվել է թիվ 1010993 ստուգման ակտը: Ստուգման ակտի 3-րդ կետով արձանագրվել է, որ. «Համաձայն «Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի և 3-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի, 2015թ. հունվարի 1-ից ընկերության կողմից օտարման գործարքները ազատվում են ավելացված արժեքի հարկից, եթե ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով իրենց գրանցման վայրի հարկային մարմին չեն ներկայացրել

սույն ենթակետով նախատեսված արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն: Ընկերության կողմից Իջևանի ՏՀՏ վերոհիշյալ արտոնությունից հրաժարվելու մասին հայտարարություն չի ներկայացվել: 2015թ. ընթացքում ընկերության կողմից արտադրված և իրացված էլեկտրաէներգիայի համար «ՀԷՑ» ՓԲԸ-ին դուրս են գրվել հարկային հաշիվներ, որոնց մեջ օրենքով սահմանված կարգով արտացոլված ԱԱՀ-ի գումարները ներառվել են հարկային տեսչություն ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներում»:

3.3. «Ատլաս-էներգո» ՍՊ ընկերությունը 30.11.2016թ. բողոք է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողովին՝ խնդրելով մասնակի չեղյալ համարել 2016 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 1010993 ստուգման ակտը՝ ավելացված արժեքի հարկի մասով:

Գանգատարկման հանձնաժողովի կողմից Ընկերության բողոքի մերժման համար հիմք են ընդունվել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 19-րդ և 29-րդ հոդվածների կարգավորումները, ինչպես նաև այն, որ Ակտի 3-րդ կետով արձանագրվել է ընկերության կողմից օրենքի պահանջները կատարած լինելու փաստը, օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել, լրացուցիչ պարտավորություններ չեն առաջադրվել և պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել: Միաժամանակ Գանգատարկման հանձնաժողովը որպես հիմնավորում նշել է, որ հարկային հաշիվների կամ դրանց փոխարեն այլ հաշվարկային փաստաթղթերի դուրսգրումը, սխալներով լրացված և դուրս գրված հաշիվների չեղյալ ճանաչումը, հարկային հաշվարկների ներկայացումը կամ դրանց ճշգրտումը ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխան՝ կատարվում են բացառապես հարկ վճարողների կողմից և հարկային մարմինը կամ Գանգատարկման հանձնաժողովը դրանց կատարմանը պարտավորեցնելու իրավասություն չունեն:

3.4. Ինչպես ստուգումն իրականացրած հարկային մարմնի, այնպես էլ Գանգատարկման հանձնաժողովի և Բողոք բերած անձի կողմից չի վիճարկվել և չի վիճարկվում այն փաստը, որ Ընկերության նկատմամբ ԱԱՀ-ն ներառող հարկային հաշիվների դուրս գրման ժամանակ կիրառելի է եղել «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի կարգավորումը՝ կապված ԱԱՀ-ի վճարումից ազատված լինելու հետ:

4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

Բողոք բերած անձը պահանջ է ներկայացրել Հանձնաժողովին՝ անվավեր ճանաչել Գանգատարկման հանձնաժողովի 27.12.2016թ. թիվ 43/1 որոշումը և կայացնել նոր վարչական ակտ, այն է՝ անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2016թ. հոկտեմբերի 31-ի թիվ 1010993 ստուգման ակտի՝ «Ավելացված արժեքի հարկ» վերտառությամբ 3-րդ կետն ամբողջությամբ:

Վերոհիշյալ պահանջի հիմնավորվածության տեսանկյունից Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ «վարչական ակտ» հասկացությանը և վարչական ակտը մի մասով անվավեր ճանաչելու հնարավորությանը:

Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, սույն օրենքի իմաստով՝

ա) բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման.

բ) միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը.

գ) զուգորդվող վարչական ակտն այն վարչական ակտն է, որն իր մեջ պարունակում է անձի համար ինչպես բարենպաստ, այնպես էլ միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ:

Օրենքի նշված սահմանումներից հետևում է, որ համապատասխան փաստաթուղթը վարչական ակտ բնորոշելու համար բացի այլ հատկանիշներից, պետք է նաև ուղղված լինի անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Ընդ որում, վարչական ակտը որպես փաստաթուղթ իր մեջ միաժամանակ կարող է ներառել ինչպես միջամտող, այնպես էլ բարենպաստ դրույթներ, որոնք համապատասխանում են վարչական ակտի ամբողջական էությանը և պետք է ուղղված լինեն համապատասխան իրավական հետևանքների առաջացմանը:

Նշվածից ելնելով էլ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը նախատեսում է վարչական ակտն անվավեր ճանաչելու հնարավորություն ոչ միայն ամբողջությամբ, այլև դրա մի մասով, որպիսի պարագայում նույն օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, անվավերության հետևանքները տարածվում են վարչական ակտի անվավեր ճանաչված մասի վրա:

Քննարկվող վարույթի շրջանակներում Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ բողոքարկված վարչական ակտի, այն է՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ 2016թ. հոկտեմբերի 31-ի թիվ 1010993 ստուգման ակտի «Ավելացված արժեքի հարկ» վերտառությամբ 3-րդ կետը իր բովանդակությամբ չի համապատասխանում ստուգման ակտին՝ որպես վարչական ակտին օրենքով ներկայացված պահանջներին՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Նշվածի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը հանդես է գալիս որպես առանձին տեսակի վարչական վարույթ սահմանող օրենք, որի 6-րդ հոդվածը սահմանում է նշված վարույթի շրջանակներում կայացման

ենթակա վարչական ակտին ներկայացվող պահանջները: Մասնավորապես, վերոհիշյալ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ստուգում իրականացնող մարմինը իրավասու է կազմել երկու տեսակի փաստաթուղթ՝ տեղեկանք, եթե խախտումներ չեն հայտնաբերվել, կամ ակտի նախագիծ, եթե հայտնաբերվել են խախտումներ:

Նախագիծը տնտեսավարողի կողմից քննարկվելուց հետո կազմվում է ստուգման ակտը, որը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերի համաձայն պետք է պարունակի՝

9) ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել:

10) պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը. :

Օրենքի վերոհիշյալ պահանջի տեսանկյունից վիճարկված ստուգման ակտի 3-րդ կետով ամրագրված դրույթը որևէ կերպ չի համապատասխանում ստուգման ակտին ներկայացվող պահանջներին, քանի որ համապատասխան փաստի ամրագրումը՝ առանց դրա խախտում հանդիսանալու վերաբերյալ բնորոշման և պատասխանատվության կիրառման հիմքերի նշման, ստեղծում է անորոշություն վարչական ակտի հասցեատիրոջ համար և համապատասխանաբար վատթարացնում է վերջինիս փաստացի դրությունը, որպիսի հանգամանքը բնորոշ է միջամտող վարչական ակտին:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, ստուգումների հետ կապված վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, գրավոր վարչական ակտին ներկայացվում են հետևյալ պահանջները.

ա) վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին :

Նույն օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վարչական ակտը պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, վարչական ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում:

Նշվածի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովը չի պատշաճ չի քննարկել վերոհիշյալ փաստական հանգամանքները, որպիսի պարագայում չեն բացահայտվել Բողոք բերած անձի օգտին առկա բոլոր փաստական հանգամանքները՝ խախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջը:

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի, 1-ին մասի «ա» կետի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ատլաս-Էներգո» ՍՊ ընկերության 23.01.2017թ.-ի բողոքը բավարարել. անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 02.08.2016թ.-ի թիվ 19/2 որոշումը և կայացնել նոր վարչական ակտ հետևյալ բովանդակությամբ. ««Ատլաս-Էներգո» ՍՊ ընկերության գանգատը բավարարել. անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 31.10.2016թ. կազմված թիվ 1010993 ստուգման ակտի «Ավելացված արժեքի հարկ» վերտառությամբ 3-րդ կետը՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկային պարտավորություններ առաջացնելու մասով»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ